

պարսիկ զծածեւերով շինուած ոսկիով եւ արծաթով: Սակայն որեւէ ակնարկութիւն չկայ երբեք ասոնց նման մետաքս զորդեր հայթաթած ըլլալուն, ինչպէս որ կը վերագրուի»⁽²¹⁾: Գրեթէ նոյնը գրած էր Ժամանակին Arthur Upham Pope իր մէկ աշխատութեան մէջ, « Jowhan Madziraski լեհերէն է, որ հայերէն կը նշանակէ Յովհաննէս Մաճարեան, Մաճարաց երկրէն Յովհաննէս: Յովհաննէս Մաճարեան կամ Jowhan Madjarski երբ մանուկ էր, Հունդարիոյ մէջ կը բռնուի Թուրքերէն եւ իբր գերի հօրը հետ Կ. Պոլիս կը տարուի: Ան կը թուրքիւն կը ստանայ հայ քահանայէ մը եւ ըստ երեւոյթին՝ միայն հայերէն կրնար գրել: Ան կատարելապէս կը սորվի արեւելեան կերպերով մետաքս եւ ոսկեթել հիւսել, եւ կը վերադառնայ Լեհաստան: Մենք իր մասին առաջին անգամ կ'իմանանք 1759ին Sluckի մէջ ոսկեթել հիւսուած եղէններ արտադրելով գրադած: 1758 Յունուար 24ին՝ անիկա յանձնառութիւն մը կը ստորագրէ Վիեննայի իշխան Michael Kazimir Radziwillի հետ, ստանձնելով պարսկական գործարանի մը վարչութիւնը, գործ տալով բաւական թիւով սկսնակներու, եւ դանոնք պարսկական արուեստի գործնականութեան մէջ կը թելով»⁽²²⁾: Սակայն այս վկայութեանց մէջ կը պակսի զորդ շինելու որեւէ վկայութիւն: Ասկէ զատ «Բոլոնէզ» զորդերը ԺԶ դարէն ըլլալու չափ հին են եւ մինչ վերոյիշեալ գործարանը հազիւ ԺԸ դարու կէսին կը յայտնուի:

Ըստ իս, հաւանական է որ 1578էն ի վեր գոյութիւն ունեցող «Բոլոնէզ» կոչուած զորդերը գլխաւորաբար կը շինուէին Պարսկաստանի մէջ, մասնաւոր եւ բարձրարուեստ գործարաններու մէջ հայ կամ պարսիկ հիւսողներէ, զուցէ յատկապէս պարսիկ արքունեաց համար, անկէ Եւրոպական արքունիքները նուէր զրկուելու միտքով⁽²³⁾: Բնական է որ այս զորդերը կը զծուէին եւ կը գունաւորուէին աւելի Եւրոպական ճաշակի համեմատ, որ կը սիրէր ոսկի եւ ոսկեզոյն, մարդը եւ մեղմ

(21) Polish Rugs from Persia. — Antiquarian, ամսաթերթ, Նիւ Եորք, 1930, նոյեմբեր:

(22) Oriental rugs as Fine Art. — V. — So callad Polish or Polonaise Carpets. International Studio, ամսաթերթ, 1923, Մարտ, էջ 535, 541: Շնորհակալ եմ Պր. Պ. Լուսարարեանի, զորդի զծագրիչ ի Նիւ Եորք, որ վկայութեանս ծանօթացուց:

(23) A Handbook of Muhammadan Art. — by M. S. Dimand. — The Metropolitan Museum of Art, New York, 1944, երկրորդ հրատարակութիւն, էջ 298, որ խուսարուկ կերպով կ'ըսուի. «Բաւական որոշ է որ այս տեսակ զորդերը արտադրուած էին Պարսկաստանի մէջ ԺԷ դարու առաջին կէսին, Իսֆահանի եւ Գեշանի արքունի աշխատանոցներուն մէջ, Իսֆահանի արքունեաց գործածութեան եւ Շահին իբր նուէր արուելու համար: Անոնք շինուած էին նաեւ Եւրոպացի տիրակալներու համար, Լեհական ազրիւրներ մեզի կը յայտնեն որ Լեհաստանի թագաւորները Հայ վաճառականներ զրկեցին գլխաւորաբար Իսֆահան եւ Գեշան մետաքս եւ ոսկեթել զորդեր ապագրելու համար: Նման մետաքս զորդեր շինուած էին Շահ Ապպասի (1587-1628), Շահ Սէֆիի (1628-42), եւ Շահ Ապպաս երկրորդի (1642-66) ժամանակ: Այս Լեհական մետաքս զորդերը մեծ մասամբ վերջին երկու թագաւորներուն ատեն շինուած են: Շահ Ապպասի ժամանակին կը պատկանէին Պարսկական զեապանութիւններէ Վենետիկին 1603, 1613, եւ 1623ին նուիրուած զորդերը»: